ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ-ն ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/20 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	CGQ Biomass Sensor Automatic colony counter ultra-HD	CGQ Scan4000	CGQ Scan4000	Aquila biolabs GmbH Interscience, France	Կենսազանգվածի մշտադիտարկման օնլայն համակարգը և գաղութների Ultra-HD ավտոմատ հաշվիչը համապատասխանաբար նախատեսված են կենսազանգվածի՝ իրական ժամանակում մոնիտորինգ իրականացնելու և Պետրիի թասիկներում գաղութների ավտոմատ հաշվում կատարելու համար: Կենսազանգվածի մշտադիտարկման օնլայն համակարգը (CGQ) իրականացնում են կենսազանգվածի ոչ ինվազիվ, իրական ժամանակի մոնիտորինգ՝ հետցրված լույսի հայտնաբերման

						միջոցով: CGQ-ն իրականացնում է մոնիտորինգ թափահարվող կոլբաներում և անոթներում: Համատեղելի է Multitron Standart (Infors) ինկուբացիոն թափահարիչի հետ: Կենսազանգվածի մշտադիտարկման օնլայն համակարգը ներառում է. CGQ հանգույց 16 սենսորների ամրացման համար – 2 հատ CGQ կենսազանգվածի սենսորներ թափահարվող տարաներում չափումների համար- 16 հատ 250մլ տարաների համար սենսորների ադապտորներ - 16 հատ 500մլ տարաների համար սենսորների ադապտորներ - 16 հատ 1000մլ տարաների համար սենսորների ադապտորներ - 12 հատ Ինստալյացիայի համար անհրաժեշտ պարագաների հավաքածու - 2 Համակարգչային ծրագրի ապահովում Ծրագրային ապահովման լիցենզիա - 16 հատ Վիրտուալ աջակցություն – 2 ժամ CGQ-ն ապահովում է տեղային ջերմաստիճան և թափահարման արագություն յուրաքանչյուր տարայի համար: CGQ-ի սենսորային

						թիթեղիկը պարունակում է LED լույսի աղբյուր և ֆոտոդիոդային դետեկտոր: Յուրաքանչյուր սենսորային թիթեղ տեղադրված է կուլտիվացման անոթի տակ և չափում է կենսազանգվածը ոչ ինվազիվ կերպով տարայի պատի միջով: Մի քանի սենսորային թիթեղներ կարող են միացված լինել մեկ հանգույցի: CGQ հանգույցը միավորում է բոլոր տվյալները և դրանք ուղարկում համակարգչային ծրագրին: Համակարգչային ծրագիրը ստանում է տվյալներ հանգույցից և իրական ժամանակում պատկերում է հետցրված լույսի ինտենսիվությունը՝ ապահովելով բարձր ճշգրտությամբ աճման կորեր: Չափման սկզբունք. Հետցրված լույսի ինտենսիվություն [a.u.] *Հետցրման ազդանշանը կարող է փոխարկվել OD600 արժեքների, եթե տրամադրվում են երկու օֆլայն արժեքներ, Չափման միջակայք. ՕԽ 0.2 - 50 *OD միջակայքը կախված է կենսագործընթացի պարամետրերից, Ալիքի երկարություն. Յուրաքանչյուր CGQ

						LED-ի ստանդարտ ալիքի երկարություն. Դիրք 1: 521 նմ Դիրք 2: 521 նմ Դիրք 3: 521 նմ *յուրաքանչյուր CGQ սենսորի ալիքի երկարությունը կարգավորվող է պատվիրման գործընթացում, Չափման պատուհանի չափերը՝ մոտավորապես 18,5 x 18,5 մմ, Չափման միջակայք. խորհուրդ է տրվում՝ 5 - 30 վայրկյան, համակարգչային ծրագրում՝ մոտավորապես 20 վայրկյան, Չափեր. Սենսորային թիթեղներ՝ 92 – 177 մմ, CGQ Hub՝ սկսած 44 x 105 x 109 մմ (L x W x H), Անոթի համատեղելիություն. թափահարող տարայի չափը՝ սկսած 100 մլ-ից մինչև 5000 մլ, կոլբաներ՝ փեղկերով կամ առանց, Ապակի և միանգամյա օգտագործման 38 մմ ուղիղ անցքով պլաստմասե կոլբաներ, կպչուն գորգերի ամրացումներ, Ջերմաստիճանը՝ 10 – 50°C *Հնարավորություն ունի աշխատելու մինչև 75°C առանց կատարողականի նվազման (պլաստմասսայե մասեր մինչև 50°C, CGQ սենսորները պետք է հարմարվեն աշխատանքային

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Концерн-Энергомаш ЗАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом РЧЧЧ-ЕԱՁԱ ՊԱՐ-24/20 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
2					ջերմաստիճանին ոչ ավել քան 30 րոպե, Հարաբերական խոնավությունը՝ 0 – 80% (չկոնդենսացվող), Թափահարվող կոլբայի հագեցման ծավալը CGQ-ի համար. օպտիմալ միջակայք 10 - 15%, լավ միջակայք 5 - 25%, կիրառելի միջակայք 2 - 30%, ընդլայնված միջակայք 0 - 50%, Թափահարման արագություն CGQ-ի համար. օպտիմալ միջակայք՝ օգտագործելով պտուտակների 150-350 պտ/րոպե, թափահարման տրամագիծը՝ ≤ 2,5 սմ 0-350 պտ/րոպե, թափահարման տրամագիծը՝ ≤ 5,0 սմ 0-250, կպչուն բարձիկներ՝ 0-200: Գաղութների Ultra-HD ավտոմատ հաշվիչը գաղութների ավտոմատ HD գունավոր հաշվիչ է: Այն հարմարեցված է բոլոր չափերի Պետրիի թասիկներ և ցանկացած միջավայրի համար: Նրա անուղղակի լուսավորության համակարգը տալիս է մեծ հարմարավետություն, բարձր ճշգրտություն և գերազանց վերարտադրելիություն: Սարքը նաև հակաբիոտիկների կամ

						արգելակիչների ազդման գոտու ընթերցման համակարգ է: • Իրականացնում է հաշվարկ մակերեսային, պարուրաձև, շրջանաձև լցված թասիկներում: • Հաշվում է քրոմոգեն ագարի, PetriFilmTM, MC-media PadsTM, Compact DryTM, Easy PlateTM, ֆիլտրացիոն թաղանթների վրա: • Կլաստերային գաղութների ավտոմատ բաժանում: • Բազմանկյուն բացառման գոտիների ստեղծում: Այն կարդում է քառակուսի թասիկներ 120 մմ և կլոր թասիկներ մինչև 150 մմ չափերով: • Արգելափակման գոտու ընթերցում՝ կլոր թասիկի վրա Ø 90-100 մմ և քառակուսի թասիկի վրա 120 մմ: • Արգելափակման գոտու չափում՝ ավտոմատ՝ ձեռքով ուղղման հնարավորությամբ: • Ավտոմատ հայտնաբերում՝ թղթե սկավառակներ (միաժամանակ մի քանի ապրանքանիշեր), անցքեր, գլան (պողպատե, պլաստիկ) ձեռքով ավելացնելու կամ հեռացնելու հնարավորությամբ: • Հակաբիոտիկների թղթե սկավառակների քանակը՝ մինչև 16

						հակաբիոտիկ 120 մմ քառակուսի թասիկների վրա: • Ընթերցման ժամանակը՝ 16 արգելակման գոտու ընթերցում առավելագույնը 2-ից 4 վայրկյան: • Վերլուծության համակարգ՝ EUCAST / CA-SFM Մարդու առողջություն / CA-SFM անասնաբուժություն / CLSI (Կլինիկական, լաբորատոր ստանդարտների ինստիտուտ) /: • Հակաբիոգրամի ընթերցման ճշգրտությունը՝ ± 0,2 մմ: • Էկրանի բանաձև (Resolution)՝ ± 0,1 մմ Սարքավորումը՝ ամբողջությամբ չժանգոտվող պողպատից է; Տեսախցիկ՝ Ultra HD CMOS գունավոր տեսախցիկ, Ոսպնյակներ՝ Ultra HD ճապոնական ոսպնյակ; Թվային խոշորացում՝ x 69 Բանաձև (Resolution)՝ նվազագույնը 5 մեգապիքսել; Լուսավորություն՝ սպիտակ LED լամպ՝ White Dome LED; Լուսավորման համակարգ՝ ավտոմատ՝ նվազագույնը 7 համակցություն, սպիտակ լուսավորություն, լույսը՝ վերևում և/կամ ներքևում, սպիտակ կամ սև ֆոն; Լեզուներ՝ ֆրանսերեն, անգլերեն, ճապոներեն, չինարեն,

						ռուսերեն, իսպաներեն, գերմաներեն: • Հաշվարկման ժամանակը. 1000 գաղութ վայրկյանում: • Ավտոմատ հաշվում ձեռքով կառավարմամբ: • Ձեռքով հսկողություն՝ գաղութներ ավելացնելու կամ հանելու համար: • Հայտնաբերված գաղութի նվազագույն չափը՝ 0,05 մմ: • Էկրանի ցուցադրման ճշգրտությունը՝ ± 0,1 մմ: • Պետրի թասի ավտոմատ հայտնաբերում: • Հաշվարկ՝ Ø 55-ից մինչև 150 մմ կլոր Պետրի թասիկների և 120 մմ քառակուսի Պետրի թասիկների վրա: • Գույնի հայտնաբերում. 7 գույն նույն թասիկի վրա + 1 գույն բացառելու համար: • Արդյունքներ/հետևելիություն. նկար / նմուշի համար և հակաբիոտիկի անվանում / բակտերիաների անվանում / ընթերցման տրամագիծ / արդյունք SIR կատեգորիայով ըստ գունային կոդերի / մինի և մաքսի կրիտիկական տրամագիծ / մեկնաբանություններ / ամսաթիվ / ժամ: Տվյալների արտահանում՝ PDF, JPEG, PNG, BMP, Excel; LIMS/SIL միացում; USB միացում:

						Համատեղելի է dataLink™ կամ dataLink™ pro հետևելիության համակարգի հետ: Տվյալների անվտանգություն. փոփոխված տվյալների հետևելիություն՝ 21 CFR մաս 11-ի համաձայն: Լարումը և հաճախականությունը՝ 100-240 Վ, ~ 50-60 Հց; Ապահովիչներ՝ T3.15 A L 250 Վ 5x20 մմ; Առավելագույն հզորությունը՝ 140 Վտ; Միջազգային պաշտպանության մակնշում՝ IP00; Չափսերը (w x d x h)՝ 46.4 x 46.4 x 63.1 սմ, մաքուր քաշը՝ 25.15 կգ; Տուփ (w x d x h)՝ 80 x 60 x 63 սմ, քաշը՝ 32,5 կգ: Սարքի համար նախատեսված դյուրակիր համակարգիչ՝ պրոցեսոր՝ Intel i5, 2,8 ԳՀց, քառամիջուկ (կամ ավելի բարձր), Օպերացիոն համակարգ՝ WindowsTM 10 կամ 11 (կամ ավելի բարձր), RAM՝ 4 ԳԲ սարքի համակարգչային ծրագրի օգտագործման համար, USB 3.0 պորտ, Էկրան՝ նվազագույնը 1280 x 1024 պիքսել, սենսորային էկրան (touch screen), նվազագույնը 15.6 դույմ, 2023 թ. արտադրության 2 տարի երաշխիքով: Տրվում է՝ համապատասխան համակարգչային

						ծրագրաշար CD-ROM-ով, հոսանքի լարով, 3 վավերացման թիթեղներով, օգտագործողի ձեռնարկով: Մատակարարը պարտավոր է տեղադրել սարքավորումները, կատարել գործունեության հիմնական ստուգումները և փորձարկումը իրենց տեխնիկական բնութագրերի համապատասխանության և թերությունների բացակայության, ինչպես նաև անհրաժեշտ գործիքների առկայության վերաբերյալ: Մատակարարը պետք է իրականացնի ուսուցում կամ վերապատրաստում ոչ պակաս քան 2 շաբաթ տևողությամբ: Սարքավորումները պետք է արտադրված լինեն ոչ շուտ քան 2023թ.: Ստուգումները և փորձարկումը կիրականացվեն մատակարարի կողմից Գնորդի կամ նրա լիազոր ներկայացուցչի ներկայությամբ: Բոլոր էլեկտրական սարքավորումները աշխատեն 220V/50Hz հոսանքով և ունենան եվրոպական տեսակի վարդակներ: Կներկայացվի արտադրողի հավաստումը մատակարարի

					լիազորության վերաբերյալ (Manufacturer authorization): Մատակարարը ունի սերտիֆիկացված մասնագետ: Մատակարարը տրամադրում է սարքավորումների տեղադրումից հետո 1 տարվա երաշխիք / Անվճար ծրագրային ապահովման թարմացում 3 տարվա ընթացքում (տեղադրումից հետո): Պահեստամասերի առկայությունը՝ տաս տարի: